30 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1994. ՈՒՐԲԱԹ # 251 (754)

# Ազգ

Azg
armenian daily

## Նախկին Խս. Միության տարածքում հանցագործների կապերը չեն խզվել

ՄՈՍԿՎԱ, 29 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՌԻԱ-ՍՆԱՐԿ։ «ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ նոր պետությունների ներքգործնախարարությունների միջեւ կապերը նոր են հաստատվում, հանցագործների կապերը ոչ միայն չեն խախտվել, այլեւ ընդլայնվել են», երեկ ճեպազրույցում հայտարարեց Մոսկվայի ՆԳ վարչության բաժնի պետ Վիկտոր Բուլգակովը։

Նրա խոսքերով, այս տարի մյուս պետությունների իրավապահ մարմինները ձերբակալել են Ռուսաստանի 213 քաղաքացիների, իսկ Մոսկվայում ձերբակալվել են ԱՊՀ երկրների 800-ից ավելի քաղաքացիներ, այդ թվում Ուկրաինայի ավելի քան 300 քաղաքացի։

Նախկին ԽՍՀՄ 10 պետություններ ընդունել են ծրագիր «Կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի համատեղ միջոցառումների մասին»։ Այդ ծրագրի շրջանակներում Մոսկվայում ստեղծվում է ԱՊՀ պետությունների իրավապահ մարմինների աշխատանքի համակարգման բյուրո։

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

## Աստուած մեզ ուժ կուտայ, որ մենք մեզ հասնենք, մեր տունը շինենք

### Կաթողիկոսական տեղապահ ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանի պատգամը Նոր Տարուայ առթիւ

Նոր Տարուան սեմին, մեզանից իւրաքանչիւրին պարտականութիւնն է (նախ անհատապէս եւ ապա հաւաքաբար, ազգովին) ետ նայիլ կեանքի այս ժամանակաշրջանին։



Եւանի կառողականութիւնը բանաստեղծին նման (Վահան Թէքէեան) նստել Հաշուեյարդարի, եւ հարցնել. «...[illegible] մնաց։ Կեանքէն խնձի ի՞նչ մը նաց.» եւ պատասխանել. «Ինչ որ տուի ուրիշին, տարօրինակ, այն միայն։ Խանդաղատանք մը ծածուկ, օրհնութիւններ անիմաց, երբեմն հասնումը ...»։

Ազգովին եւս պարտինք յետ նայիլ, վերյիշել այն բոլոր տագնապալից պահերը եւ վիճակները որոնց ենթարկուեցինք, եւ այն իրագործումները եւ յաջողութիւնները որոնք մեզ խանդավառեցին եւ մեր ապագայի յոյսերը անմեռ պահեցին։

Մեր տագնապները բացայայտ են, մանաւանդ վերջին երկուքեւ տարի ամէն ... տեղ սկսած, որի վրայ աւելացան մեր հին եւ արտաքին տագնապները՝ ամէնից ...։ Հայաստանի ... անկախութիւնը ... ուզեցող ... Նաեւ Արցախի մեր ժողովուրդին եւ ... մարզկային իրաւունքի, ազգային արժանապատուութեան եւ տարական ... հարցերին ... խնդիր։

Ի՞նչ նեղութիւններ կը ճաշենք այսօր Հայաստան աշխարհի մէջ։ Սաստիկ ծմեռ, լոյս չկայ, ջուր չկայ, ջերմութիւն չկայ, սնունդ չկայ։

Արանք անբնական չարիքներ են մեզ վրայ պարտադրուած՝ քաղաքական, տնտեսական եւ ընկերային պայմաններից յառաջացած։ եւ բռնամի եւ չար ուժերի կողմից ծրագրուած՝ շրջափակումների հետեւանքով։

Բայց փառք Աստուծոյ։ Հայ ժողովուրդը հազարամեակների իր պատմութեան փորձառութիւնը ունի։ Չարը միշտ չը յաղթի։ Բարին միշտ յաղթանակէ։ Մեծ նկատուած ազգեր պատմութեան մէջ, որոնք մեզ ենթարկել են այսպիսի նեղութեանց, այսօր անյայտ ցած են։

Փառք Աստուծոյ։ Ներկայ դժուարին եւ անձուկ պայմանների մէջ, նորա հաստատ մեր պետութիւնը, անձնատուր ... կը գրկանք յանձն առած, միջազգային ընկերութեան մէջ, ուրիշ ազգերի կարգին, իր արժանաւոր տեղն է առաջ հովում, ... բայց հաստատ քայլերով։

Փառք Աստուծոյ։ Աշխարհով մէկ ցրուած ամբողջ հայութեան դիմում է կատարուած, հաստատելու համար Հայաստանի ... Սա անհրաժեշտ է, որպէսզի պետութիւնը կարող լինի ապահովելու իր երկրի տնտեսութիւնը, իր ժողովրդի բարօրութիւնը, ... կրթութեան, արուեստներու, գիտութեան, երկրի պաշտպանութեան եւ այլ մարզերի զարգացման կարիքները։

Տես էջ 8

ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔ

## Երեւանում ձերբակալություններ, չեն հրատարակվում «Երկիր» եւ «Ազատամարտ» թերթերը

### ՀՅԴ խմբակցությունն անօրինական է համարում նախագահի հրամանագիրը

Դեկտեմբերի 28-ին Հայաստանի նախագահի հրամանագրով ժամանակավորապես կասեցվեց Հայ հեղափոխական դաշնակցության գործունեությունը Հայաստանում։ Նույն գիշեր խուզարկություն է ներարկվել ՀՅԴ կենտրոնական կոմիտեի երեւանյան գրասենյակը, կասեցվել է «Երկիր» եւ «Ազատամարտ» թերթերի, ինչպես նաեւ «Հայլուր» լրատվական գործակալության գործունեությունը։ Կասեցված է նաեւ «Աշխարհ» եւ «Մունետիկ» թերթերի հրատարակությունը։ [illegible]

[illegible]

Այս առթիվ կայացած մամուլի ասուլիսում ՀՅԴ պատգամավորական խմբակցությունը երեկ հայտարարեց, որ նախագահի դեկտեմբերի 28-ի հրամանագիրն անօրինական է եւ [illegible]

[illegible]

Տես էջ 2

ԱՆԴՐԿՈՎԿԱՍ

## Ռուսաստանի իշխանությունները թույլատրեցին ադրբեջանական նավերի ելքը

ԲԱՔՈՒ, 29 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐԿ-ԻՆՏԵՐՖԱՔՍ։ Չեչնյան ժամանակավորապես փակված է ռուս-ադրբեջանական սահմանը։ Ռուսաստանի իշխանությունները [illegible] ադրբեջանական նավերին թույլատրել են դուրս գալ ... Աստրախանի նավահանգիստներից։ [illegible]

[illegible]

## Ռուսաստանի ՆԳՆ. «Չեչենները կզինաթափվեն տասն օրում»

ՄՈՍԿՎԱ, 29 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՌԻԱ-ՍՆԱՐԿ։ «ՆԳ մարմինների աշխատակիցները Չեչնիայում կկործեն [illegible]

[illegible]

Տես էջ 3

ԵՐԵԿ

## Թուրքիան պատրաստ է ԵԱՀԽ ամբողջ զորաբաժինը կազմել իր զինծառայողներից

ԲԱՔՈՒ, 29 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԹՈՒՐԱՆ, ՍՆԱՐԿ։ Երեկ Թուրքիայի խորհրդարանի նախագահ Հուսամեդդին Ջինդորուկը եւ Ադրբեջանի ԳԽ նախագահ Ռասուլ Գուլիեւը առաջարկեցին միջխորհրդարանային համագործակցության [illegible]

«Թուրքիան հանդես է գալիս ... Չեչնիայի ... [illegible]

[illegible]

ՀԱՄԱՌՈՏ

## Պայթյունի համար պատասխանատու են իսրայելցիները

ԲԵՅՐՈՒԹ, 29 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ։ Բեյրութում դեկտեմբերի 21-ին տեղի ունեցած պայթյունի [illegible] մար, երբ սպանվեց ու վիրավորվեց 20 մարդ, պատասխանատու են Իսրայելի հատուկ ծառայությունները։ Այդ մասին ասվում է Լիբանանի բանակի հրամանատարության հայտարարության մեջ, որը լուրեր է տարածել Բեյրութի շրջակայքում։ Քննության ընթացքում պարզվել է, որ այդ ծեռնարկումն իրականացրած Սիմոն խոսքը եւ նրա հանցակիցները հավաքագրվել էին Իսրայելի «Մոսսադ» հատուկ ծառայության կողմից։

## Վերջին 4 տարում Ռուսաստանից դուրս է բերվել 50 մլրդ դոլլար

ՏՈԿԻՈ, 29 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ։ 90-ական թվականների սկզբից Ռուսաստանից վալյուտայի ֆինանսական միջոցների անօրինական արտահոսքի ընդհանուր գումարը հասել է 50 մլրդ դոլլարի, որ կազմում է նախկին ԽՍՀՄ արտաքին պարտքի ընդհանուր գումարի 60 տոկոսը։ Այդ մասին ճապոնական «Նիհոն կեյզայ» թերթին հայտնեցին Միջազգային արժութային հիմնադրամում եւ «Փարիզյան ակումբում», որը միավորում է վարկատու խոշորագույն պետություններին։

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ **միջազգային**

[illegible]

Զրույցը վարեց
[illegible]
Լոնդոն-Երևան

[illegible]

ԱՇԽԱՐՀ

# 1994. Ժողովուրդների դժգոհության, աշխարհի հզորների նկատմամբ անտարբերության և փակ դռների քաղաքականության տարի

[illegible]




[illegible]

Պատրաստեց
[illegible]

ՀՈՒՆԳԱՐԻԱ

# Վարչապետ Դյուլա Հոռնը հաջողակ մարդ է

[illegible]

«Լե Մոնդ»
17 դեկտեմբերի

ՎԱՇԻՆԳՏՈՆ

## ԿՀՎ. «Ռուսաստանի կառավարությունում հնարավոր են փոփոխություններ»

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 28 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ։ «Բոստոն գլոբ» թերթի վաշինգտոնյան թղթակցի հաղորդման մեջ բերվում են անհայտ մնալ ցանկացած պաշտոնական անձանց խոսքեր, որոնց համաձայն ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչությունը Սպիտակ տուն է ուղարկել Մոսկվայում ամերիկյան հետախուզության զեկուցագիրը։ Դրանում նշվում է, որ առաջիկա մի քանի օրերին Ռուսաստանի



կառավարության մեջ կարող են տեղի ունենալ նշանակալի փոփոխություններ։ Թերթում ընդգծվում է, որ այդ զեկուցագիրը խիստ հակիրճ է և ձևակերպված է շատ զգուշորեն։ «Ազատություն» ռադիոկայանի դեկտեմբերի 26-ի հաղորդման համաձայն, զեկուցագրում վկայակոչվում է [illegible] աղբյուր։ Նշվում է, որ Վաշինգտոնում զեկուցագիրն ընդունել են լրջորեն և տարածել Քլինթոնի վարչակազմի բարձրաստիճան պաշտոնյաներին։ Զեկուցագրում չի ասվում, թե ինչ կարգի փոփոխություններ պետք է ակնկալել և ինչպես են դրանք իրականացվելու. սահմանադրական, թե՞ ոչ սահմանադրական միջոցներով։ Հայտնի չէ, թե արդյոք դա նախազգուշացում է առանձին ղեկավարների, օրինակ, Գրաչովի հրաժարականով կամ նախագահ Ելցինի մեկուսացմանն ուղղված գործողություններով Ռուսաստանի կառավարության վերին օղակներում նախապատրաստվող փոփոխությունների մասին։ «Զեկուցագրին ծանոթ աղբյուրներն այն համարում են զգուշավոր և վերապահումներով արված նախազգուշացում նախագահի դեմ ուղղված հնարավոր գործողությունների մասին»։

Միաժամանակ, ինչպես հաղորդում է «Սնարկը», Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Բիլ Քլինթոնը չորեքշաբթի երեկոյան ընդունել է ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության տնօրեն Ջեյմս Վուլսիի հրաժարականը։ Այս մասին հաղորդած Ռոյթեր գործակալությունը նշում է, որ ԿՀՎ-ի ղեկավարի հրաժարականը Վաշինգտոնում չընդունվեց որպես անակնկալ, քանի որ Վուլսիի ղեկավարած գերատեսչությունում բարոյական մթնոլորտը խիստ վատացել էր ԿՀՎ-ի բարձրաստիճան աշխատակից Օլդրիջ Էյմսի լրտեսական գործունեության բացահայտվելուց հետո։ Վերջինս, ինչպես հայտնի է, ձերբակալվել էր Ռուսաստանի օգտին տվյալներ հավաքած լինելու մեղադրանքով։

ՎԱՃԱՌՈՒՄ ԵՄ
Կահույք
«Ռեժանս»
հեռուստացույց
«Չայկա»,
«Պանասոնիկ»
տեսամագնիտոֆոն
«Ակաի», «Սոնի»
սառնարան
«Զիլ», «Օրսկ»
Զանգահարել՝
520937, 581991, 522656

digitised by A.R.A.R.@

